

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՆԱՅՈՑ ԹԵՄԻՑ

17 Յուլիս Գերմանիոյ Պրաունշվայկ քաղաքի Անտարանական Սուրբ Պլագ Մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն՝ նախագահութեամբ նահանգի Եպիսկոպոս Տոքթ. Ֆրիտրիխ Վէպերի եւ Գերմանիոյ հայոց առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանի: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերակցէր Պեռլինի եւ Նիսիսային Գերմանիոյ համայնքներու հոգեւոր հովիւ Նոզշ. Տ. Օշական վրդ. Կիլկիլեան եւ Պրաունշվայկի հայ համայնքի արքեմապետ Տիար Յովհաննէս Գալուստեան:

Արարողութեան ընթացքին քարոզ խոսեց առաջնորդ Սրբազան Նայրը:

Յաւարտ արարողութեան առաջնորդ Սրբազանը ընդունուեցաւ Պրաունշվայկի քաղաքապետ Տիկին Տրեպերիքէ Նարիֆինկերի կողմէ եւ սպորադիկ քաղաքի պատուոյ ոսկեայ տետրակին մէջ:

16-21 Օգոստոս Զէօլնի մէջ կազմակերպուած Համաշխարհային Երիտասարդական Օրերու շրջանակէն ներս 17 Օգոստոս, Չորեքշաբթի օրը, Ս. Մէվերին եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն մը, որուն ներկայ էին՝ քարքեր Եկեղեցիներու պարկանող մօտ 800 երիտասարդներ: Առաջնորդ Սրբազանի կարգադրութեամբ Նայ Առաքելական Եկեղեցոյ կողմէ արարողութեան իր մասնակցութիւնը բերաւ Բարեշնորհ Մայաթ սրկ. Պոյաճեան:

Նոյն թուականներուն Զէօլն հասած շուրջ մէկ միլիոն երիտասարդութեան խօսեցաւ Նոմի Սրբազան Պապը՝ Պենտիքթոս 16-րդ, որ 19 Օգոստոսին Զէօլնի Կաթողիկէ Արքեպիսկոպոսարանին մէջ ընդունեց Ուղղափառ եւ Անտարանական Եկեղեցիներու ներկայացուցիչները, ի թիւս նաեւ Գերմանիոյ հայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան:

Գերմանիոյ Կաթողիկէ Եկեղեցոյ եպիսկոպոսական ժողովի արքեմապետ Քարտինալ Լէնմանի եւ Անտարանական Եկեղեցոյ պետ Նիպեր Եպիսկոպոսի ելոյթներէն ետք Սրբազան Պապը խօսեցաւ ներկաներուն, ապա մէկ մէկ ծանօթանալով յիշատակի մեծաշնորհներ բաժնեց իւրաքանչիւրին:

Երիտասարդական Նաաքի ծրագրին մէջ նախարեսուած էր նաեւ Կ. Պոլսոյ հայոց Պատրիարք Ամենապապի Ս. Մեսրոպ Ս. արքեպս. Մութաֆեանի ներկայութիւնը: Սրբազան Պատրիարքը յիշեալ թուականներու միջեւ քարքեր վայրերուն մէջ, բացի արարողութիւններու մասնակցելէ, խօսեցաւ երիտասարդներուն եւ ունեցաւ մամլոյ ասուլիսներ:

20 Օգոստոս Սրբազան Պատրիարքը, իր հետ ունենալով Արժ. Տ. Տրդատ քինյ. Ուզունեանը, ընդառաջեց Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդին ու Թեմական Խորհուրդի մասնաւոր հրաւերին մասնակցելու երեկոյեան Լոյս Զուարթի արարողութեան Ս. Սահակ-Ս. Մեսրոպ առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ: Լեւի-լեցուն եկեղեցոյ մէջ եւ արարողութենէն յետոյ, առաջնորդ Սրբազանի բարի գալուստի խօսքերէն ետք ժողովուրդին խօսեցաւ Պատրիարք Սրբազան Նայրը՝ վեր առնելով Համաշխարհային Երիտասարդական օրերու կարեւորութիւնը, ընդգծելով միեւնոյն ժամանակ, թէ հայերը եւս պէտք է օրինակուին նման քայլերէ, կարենալ զօրացնելու իրենց սրբազան հաւաքըն ու շարունակելու իրենց գոյամարտը:

Յաջորդ առաւօր, 21 Օգոստոսին, կանուխ ժամերէն սկսեալ Սրբազան Պատրիարքն ու Գարեգին Սրբազան միասնաբար ներկայ գտնուեցան Քէօլնի Մարիէնֆելտ կոչումով վայելող, ուր մէկ միլիոն ժողովուրդի ներկայութեան տնիքի ունեցաւ Ս. Պատարագ, զոր մատուցանեց Սրբազան Պապը:

Հայկական պատուիրակութիւնը, որ ճիշդ խորանին ելաւ, պատուոյ տնիքը նստած էին, Ս. Պատարագէն ելր Սրբազան Պապը գալով՝ առաջին անգամ ողջունեց Ամենապապի Սրբազան Պատրիարքը, ապա միւս ներկայացուցիչները:

ԴԻԲԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ